## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «26» փետրվարի 2024թ.

**ժամը 16:00**

**Մասնակցում էին**

**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝** Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

**Բացող անդամներ՝** Ա.Կատվալյան, Գ.Աղլամազյան,

**Քարտուղար՝** Ս.Թամամավեյան,

**«ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**Գ.Բոշյան**

**1)** «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ են ներկայացրել 3 /երեք/ մասնակիցներ՝

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՓՈՐԹ» ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Սարմենի փ. 1<br>globalsup@bk.ru |
| 2 | «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ | Գ.Կարմիրգյուղ, Պ.Սևակի 35<br>Rudik-1989@mail.ru |
| 3 | «Ռոման Խաչատրյան Գևորգի» Ա/Ձ | ք.Գավառ, Զոր.Անդրանիկի փող.63/44<br>kareng1984@yandex.ru |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

**2)** Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

**2.1)** «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՓՈՐԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հավելված 2.1-ը:

**2.2)** «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հայտով ներկայացրած հավելված 1-ում /գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարություն/ և հավելված 2-ում /գնային առաջարկ/ սխալ է նշված գնանշման հարցման ծածկագիրը:

**2.3)** «Ռոման Խաչատրյան Գևորգի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ խնդիրները՝

- հայտով ներկայացրած հավելված հավելված 2-ի /գնային առաջարկ/ վերնամասի աջ կողմում «Գնանշման հարցման հրավերի»-ի բառերի փոխարեն գրվել է «բաց մրցույթի հրավերի» բառերը:
- աղյուսակի գլխամասում «ծառայությունների անվանում» բառերի փոխարեն գրված է «աշխատանքների անվանում» բառերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

**3)** Հիմք ընդունելով վերը նշվածները **գնահատող հանձնաժողովը որոշեց** կասեցնել նիստը՝

**ա)** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետի և 2024 թվականի փետրվարի 19-ին ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները՝ «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՓՈՐԹ» ՍՊԸ-ին առաջարկել 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 28/02/2024 թվականը, ժամը 18:00-ն շտկել վերը նշված անհամապատասխանությունը և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել պահանջվող հավելված 2.1-ը:

**բ)** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ մասի պահանջները՝ մերժել «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը:

**գ)** Դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պարզաբանում ստանալու նպատակով թե արդյո՞ք վերը նշված խնդիրները տեխնիկական վրիպակներ են, թե՞ «Ռոման Խաչատրյան Գևորգի» Ա/Ձ-ի հայտի հավելված 2-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

**4) Գնահատող հանձնաժողովը որոշեց** գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզաբանման տրամադրման հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12, 2-րդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԱՀ՝ | | Գ.ԲՈՇՅԱՆ |
| ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ |
| | | Ն.ՄՈՒԽՍՅԱՆ |
| ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ |
| | | Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ | | Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ |